

XVI ԴԱՐԻ ՕՍՄԱՆՅԱՆ ՊՈՆՁԻԱՅԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

16-րդ դարն Օսմանյան կայսրության պատմության մեջ բնորոշվում է որպես «Ոսկե դար», նախ այն պատճառով, որ այն առանձնանում էր քաղաքական ու մշակութային զարգացումներով, և կայսրությունը հասել էր իր հզորության գագաթնակետին: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ գրական-մշակութային կյանքը զարգանում էր մեծ քաղաքներում՝ մասնավորապես Ստամբուլում, Էդիրնեում, Բուրսայում, Կոնիայում, որտեղ սուլթանների հովանավորությամբ համախմբվում էին ժամանակի մտավորականները:

Օսմանյան պոեզիայի առանձնահատկությունների, ինչպես նաև բանաստեղծների կենսագրական փաստերի և գործունեության մասին մենք տեղեկանում ենք նախ և առաջ կենսագրական հուշագրություններից (tezkere): Ներկայացնելով այդ ժամանակաշրջանում տիրող գրական խառը իրավիճակը՝ կենսագիր Լաթիֆին⁵⁹² (1582 թ.) գրում է. «Մարդկանց մեծամասնությունը ի գորու չէ հասկանալու բանաստեղծական արվեստի շքեղությունը, քանզի կշտամբում են այն, ինչը գովասանքի է արժանի և հակառակը... Մեր ժամանակներում մեր պոետներին կարելի է դասակարգել հետևյալ կերպ. առաջինը նրանք են, ովքեր ունեն սեփական միտք և ինքնուրույն ստեղծագործական երևակայություն: Այդ պոետներն այնքան սակավաթիվ են, որքան իրական սեփները՝ մարգարեի սերունդները: Երկրորդ՝ ովքեր բանաստեղծություններ արտասույելու մեծ վարպետներ են և երևակայում են իբրև իրական պոետներ...»⁵⁹³:

Թուրք գրականագետները միջնադարյան թուրքական գրականությամբ սկսում են հետաքրքրվել միայն 20-րդ դարում՝ երիտթուրքական հեղաշրջումից հետո⁵⁹⁴: Ըստ թուրք գրականագետ Մ. Ֆ. Քոփրյուլուի՝ «16-րդ դարում պարսից կլասիցիզմին զուգահեռ ձևավորվում է թուրքական կլասիցիզմը»⁵⁹⁵: Նա գրում է, որ օսմանյան բանաստեղծներն արաբական տաղաչափության կանոնները պահպանելու համար իրենց ստեղծագործություններում կիրառում էին արաբապարսկական բառեր՝ շինծու դարձնելով իրենց ստեղծագործությունները: Այս կերպ «ժողովրդին անհասկանալի պարսկական ոգին ու շունչը ներխուժում էր օսմանյան պոեզիա, և փաստորեն գրականությունը անջրպետ էր առաջացրել պալատի, մեդրեսեի ու հասարակ ժողովրդի

⁵⁹² Latifi (1491-1582): Ծնվել է Քասթամոնում, իսկական անունը Աբդուլլաթիֆ (Abdüllâtîf): Իր կենսագրական հուշագրությունը Լյաթիֆին ավարտում է (1546թ. /հիշրայի 953թ), որն առաջին անգամ տպագրվում է Չ. Թեոդոր Կարապետի (H. Theodor Charabet) կողմից Յյուրիխում 1800թ: 1950թ Օսման Ռեսչերի (Osman Rescher) կողմից Թուրինգենում թարգմանվում է նաև գերմաներեն: St'e u S. Banarlı, Resimli Türk Edebiyatı, cilt 1., İstanbul, Dogan Ofset A.s. 2004, s. 614-616.

⁵⁹³ قسطنونلى لطيفى تذكره لطيفى در سعادت اقدام مطبوعسى ١٣١٤، ٤٣-٣٣ س.، ինչպես նաև Смирнов В. Д., Очеркъ Истори Турецкой Литературы, Всеобщая история Литературы, Томъ четвертый, СПб. 1892, стр. 456 .

⁵⁹⁴ 1908-1928թթ. դիվանի գրականության վերաբերյալ բացասական գնահատականներ արտահայտող թուրք գրականագետ հրապարակախոսների մեծամասնությունը սկսում է հանդես գալ նաև օսմանյան գրական ժառանգության հանդեպ լավատեսական հոդվածներով: Ռահիֆ Նեջդեդը առաջինն էր, ով պաշտպանեց դիվանի գրականությունը և նույնիսկ ֆրանսիական գրականությունն ուսումնասիրելուց առաջ խորհուրդ տվեց ընթերցել այն, տե՛ս Necded R., Musahabe-i Edebiye, Resimli Kitab, nr. 21, Haziran 1910 (1326), s. 726-727.

⁵⁹⁵ Köprülü M.F., Türk Edebiyatı Tarihi, İstanbul, 1986, s.117-118, ինչպես նաև նույնի, Türk Edebiyatı Tarihi, 7. Baskı, Ankara, 2009, s.389, 393:

միջև, որն էլ հանգեցրեց ի վերջո դիվանի գրականության անկմանը»⁵⁹⁶: Մյուս կողմից, ինչպես նկատում է թուրք գրականագետ Ն.Բանարլըն, անգամ օսմանյան գրականության անջրպետվածությունը չէր խանգարում որպեսզի ձևավորվեին առանձին գրական դպրոցներ, ինչպիսիք են «Ֆուզուլիի դպրոցը», «Բաքիի դպրոցը», «Ռուհիի դպրոցը», որոնց ներկայացուցիչները փորձ արեցին օսմանյան պոեզիայից դուրս մղել արաբապարսկական տարրերը՝ դրանք փոխարինելով ժողովրդախոսակցական արտահայտություններով և դարձվածներով: Նա 16-րդ դարը համարում է «թուրքական կլասիցիզմի» ձևավորման ժամանակաշրջան⁵⁹⁷: Նույնն է վկայում նաև թուրք գրականագետ Մ. Էֆլաթունը, նշելով, որ 16-րդ դարում օսմանյան բանաստեղծները դադարում են հետևել պարսից բանաստեղծների օրինակին և դեռ ավելին՝ սկսում են համեմատվել նրանց հետ⁵⁹⁸: Իսկ Ի. Փալան այս շրջանի օսմանյան գրականությունը (1512-1603 թթ.) համարում է դասական շրջան և անվանում օսմանյան պոեզիայի «արևածագ»⁵⁹⁹:

Եվրոպական ուսումնասիրություններում նույնպես հետաքրիր դիտարկումներ կան կապված «Ոսկե դարի» հետ: Անգլիացի արևելագետ Է. Գիբբը գտնում է, որ 1450-1600 թթ.՝ Օսմանյան պոեզիայի երկրորդ շրջանը, ժամանակագրական առումով թեև համընկնում է եվրոպական վերածննդի դարաշրջանի հետ, սակայն դրանք միմյանց հետ ամենևին կապ չունեն, և ավելին օսմանյան գրականության «ոսկե շրջան» գոյություն չի ունեցել: 16-րդ դարի եվրոպացին իր մտածելակերպով տարբերվում էր 14-րդ դարի եվրոպացուց, մինչդեռ 16-րդ դարի «թուրքը» նույնն էր, ինչ մի քանի դար առաջ և այդպիսին էլ շարունակում էր մնալ հետագայում: Շարունակելով բնութագրել օսմանյան պոեզիան՝ Է. Գիբբը գրում է, որ նույնիսկ գիտական փիլիսոփայության գրականության ասպարեզում բացակայում էր հունական ազդեցությունը, իսկ օսմանցիներն այդ ժամանակ միայն տեղյակ էին խալիֆայության օրոք կատարված արաբերեն թարգմանություններից: Վերջինս օսմանյան պոեզիան համարում էր ընդամենը պարսկական դպրոցի ճյուղավորումներից մեկը, որը ժամանակի ընթացքում փոքր-ինչ կատարելագործվեց և ձեռք բերեց ինքնուրույնություն⁶⁰⁰: Իսկ այնպիսի եվրոպացի արևելագետներ, ինչպիսիք են Չ. Ուելսը⁶⁰¹, Ջ. Բեդհաուզը⁶⁰² երկար ժամանակ քննադատում էին այն թեզն, ըստ որի զավթողական քաղաքականություն վարած բարբարոս թուրքերն ընկալվում էին իբրև ռազմական ճամբար, և այն, ինչ ստեղծել են ուշադրության արժանի չէ: Եվրոպական այդ պատմական թշնամանքն ընդգծում էր նաև ռուս արևելագետ Վ. Սմիրնովը⁶⁰³:

Արևելագետ Ջ. Քաֆադարը, անդրադառնալով Օսմանյան կայսրության «Ոսկե դարին» գրում է. «Եվրոպական, ինչպես նաև շատ հայտնի երևակայական պատմագրությունից վերցված «Ոսկեդար» եզրույթն անընդմեջ շրջանառվել է՝

⁵⁹⁶ Նույն տեղում

⁵⁹⁷ Banarlı N. S., a.g.e., s. 561.

⁵⁹⁸ Eflatun M., Mermer A., Alici L., Bayram Y., Koç Keskin N., Eski Türk Edebiyatına Giriş, 6. Baskı Ankara, Akçağ Yayınları, 2010, s. 473-474.

⁵⁹⁹ Pala İ., Ansiklopedik Divân Şiiri Sözlüğü, İstanbul, Kapı Yayınları, 2004, s.122-123.

⁶⁰⁰ Gibb E.J. W., A history of Ottoman Poetry, V. II, Edit. By Edv. Browne, London, Cambridge University, 1902, p. 12, Крымского А., История Турции и ея Литературы отъ разцвѣта до начала упадка, Труды по востоковѣдѣнію, Москва, Изд.-іе Лазаревскимъ Институтомъ Восточныхъ языковъ, Выпуск XXIX № 1-й, 1910, стр. 39:

⁶⁰¹ Wells Ch., The Literature of the Turks, A Turkish Chrestomathy, London, Bernard Quaritch, 15 Piccadilly 1891, p xi-xii.

<http://ia600301.us.archive.org/27/items/literatureofturk00welluoft/literatureofturk00welluoft.pdf>

⁶⁰² Redhouse J. W., On the Hstory, System, And Varieties of Turkish Poetry, London, 1878, p.4-5.

⁶⁰³ Смирнов В. Д., Очеркъ Исторіи Турецкой Литературы, СПб., 1891, стр. 427.

չենթարկվելով լուրջ գիտական ուսումնասիրության... Կլասիցիզմի որակումը վերցված է պարսկականից և, իհարկե, սա չի նշանակում, որ Օսմանյան քաղաքակրթությունը հետևում էր արևմտյան եվրոպական քաղաքակրթությանը ու Վերածննդին ...»⁶⁰⁴:

Ռուս հայտնի արևելագետ Ա. Կրիմսկին գտնում էր, որ օսմանյան պոեզիան չէր կարող եվրոպական Վերածննդի ազդեցությունն ունենալ, ավելին, համարում էր այն պարսկական գրականության ճյուղավորումներից մեկը: Ըստ նրա՝ «Ոսկե դարը» ամբողջությամբ պարսկական գրականության ներկայացուցիչ Ջամիի հերթյան դպրոցի ազդեցության տակ էր: Նա օսմանյան պոեզիայի իրական ծաղկման շրջանը համարում էր սուլթան Բեյազիդ Երկրորդ Վելիի (1481-1512թթ.) գահակալության տարիները, իսկ 16-րդ դարը, նրա կարծիքով, «անհետաքրքիր»⁶⁰⁵: Իբրև նորոյթ՝ նա առանձնացնում է շահնամեջիներին, որոնք գործել են սուլթան Սուլեյման Առաջինի օրոք, սակայն, հաջողություն չեն ունեցել: Վերջիններիս պարտականությունը հաղթանակի կամ որևէ կարևոր իրադարձության առթիվ ներբող գրելն ու օսմանյան անցյալը փառաբանելն էր⁶⁰⁶:

15-րդ դարի երկրորդ կեսի և 16-րդ դարի «Ոսկե դարին» է անդրադարձել նաև խորհրդային արևելագետ - գրականագետ Վ. Գարբուզովան: Օսմանյան պոեզիայի զարգացումը նա կապում է նախ և առաջ օսմանյան բանակի մեծաքանակ հաղթանակների ու ֆեոդալական պետականության հիմքերի ամրապնդման հետ: Այս ժամանակաշրջանում արքունիքում զարգացում էր ապրում գեղարվեստն իր բոլոր ճյուղավորումներով: Նա նշում է նաև, որ զարգացում դիտվում էր ոչ բոլոր բնագավառներում, քանզի կայսրությունում տնտեսական աճն անհնար էր ֆեոդալական համակարգի պայմաններում⁶⁰⁷: Այսպիսով, Վ. Գարբուզովան հերքում է 15-րդ դարի երկրորդ կեսի և, մասնավորապես, 16-րդ դարի օսմանյան գրականության մեջ կիրառվող «Ոսկե դար» հասկացությունը, մինևույն ժամանակ հիշարժան համարում այն բանաստեղծներին, ովքեր մեծապես նպաստել են օսմանյան պոեզիայի զարգացմանը: Ըստ նրա՝ «շատ քիչ պոետներ կան, ովքեր կարողացան բարձրանալ պալատական միօրինակ բանաստեղծների մակարդակից», որոնց շարքում նա առանձնացնում է Ահմեդ փաշային, Նեջաթիին, Միհրի - հաթունին, Մեսիհին, և 16-րդ դարի խոշորագույն քնարերգու Բաքիին⁶⁰⁸:

Սուլթան Սուլեյման Առաջինի գահակալության տարիներին (1520-1566թթ.) կայսրությունն իր հզորության գագաթնակետին էր և օսմանյան դիվանի գրականությունը նույնպես ծաղկում էր ապրում: Ինքը՝ սուլթանը, զբաղվում էր գրական գործունեությամբ ինչը «մոդայիկ էր» այդ շրջանի տիրակալների մոտ⁶⁰⁹: Պոեզիան այդ շրջանում պանեգիրիստական բնույթ էր կրում, և նույնիսկ քասիդները, պատմական

⁶⁰⁴ Kafadar C., *The Myth of Golden Age: Ottoman Historical Consciousness in the Post Suleymânic Era*, Kafadar C., "The Myth of the Golden Age: Ottoman Historical Consciousness in Post-Suleymanic Age." In *Suleyman II and His Time*, edited by H. Inalcik and C. Kafadar. İstanbul, 1993, pp. 39-40.

⁶⁰⁵ Крымского А., там же, стр. 41, 43, 44.

⁶⁰⁶ Крымского А., там же, стр. 79-80.

⁶⁰⁷ Гарбузова В., *Поэты средневековой Турции*, Учебное пособие, Ленинград, 1963, стр. 110-111.

⁶⁰⁸ Гарбузова В., там же, стр. 116-117.

⁶⁰⁹ Սուլթան Սուլեյմանն ուներ նաև իր գրական կեղծանունը՝ Մուհիբբի: Նրա դիվանում տեղ են գտել 3000-ից ավել բանաստեղծություններ, որոնք հիմնականում սիրային բովանդակությամբ զազեկներ են: Դիվանը տպագրվել է 1891թ.: St' u Navarian A., *Les Sultans Poètes (1451-1808)*, *Les Grandes Figures De L'orient*, Tome V, Paris, Librairie Orientaliste Paul Geuthner, 1936, p. 37, ինչպես նաև Eflatun M., v. s., a. g. e., s. 479.

⁶⁰⁹ Pala İ., a. g. e., s. 122.

ստեղծագործությունները նվիրված էին սուլթան Սուլեյման Քանունիին⁶¹⁰: Եթե ընդհանուր կողմերով փորձենք նկարագրել 16-րդ դարի գրականությունը, նախ և առաջ պետք է նշենք, այն նորամուծությունները, որ նախկինում գոյություն չունեին, կամ դեռ նոր էին կազմավորվում: Այսպես՝ 15-րդ դարի երկրորդ կեսից ի հայտ է գալիս նոր աշխարհայացք՝ «ոինդը» («խենթ»): Այն արդեն իսկ Հաֆեզի կողմից գովերգված նոր հերոս էր օսմանյան գրականության մեջ և օսմանյան պոեզիայում իր ուրույն տեղն է գրավում: «Ռինդ» բանաստեղծները կյանքը գնահատում էին որպես անցողիկ մի երևույթ՝ խորհուրդ տալով վայելել յուրաքանչյուր րոպեն, օգտվել կյանքի հաճույքներից, բայց չկարևորել նյութականը: Քաղաքային կյանքի զարգացման հետ մեկտեղ առաջանում է դեմոկրատական հոսանքը, որը բերում է այդ շրջանի գրական ստեղծագործությունների բովանդակության փոփոխության⁶¹¹: Պարսից վերածննդի գաղափարները չեն անհետանում, այլ զարգանում են և հանդես են գալիս նոր, կենսախիղճ միտումներով՝ չնայած, որ դրանք հաճախ մխրճված են սուֆիական խորհրդապաշտության մեջ⁶¹²: Ռուս գրականագետ Ռ. Մոլլովը նշում էր, որ Վերածննդի գաղափարները լիարժեք զարգացում չունեցան, քանզի պատմական իրադարձությունները, ռազմաֆեոդալական հասարակական կառուցվածքը, ինչպես նաև կրոնական պետության տնտեսության աճի անհամաչափությունը արգելք հանդիսացան նոր սոցիալական դասի կազմավորման համար, որի հետևանքով էլ Թուրքիան մնաց կես ճանապարհին⁶¹³: Ժանրային առումով շարունակվում էին գրվել քասիդներ, գազելներ, ռուբայիներ, մուամմաներ, քըթաներ և թարիհներ (ժամանակագրություն)՝ ապահովելով արաբապարսկական փոխառյալ բառերի մշտական հոսքը, և թուրքական բառապաշարն այնքան էր նեղանում, որ շատ թուրք հեղինակներ կիրառում էին թուրքերենի միայն օժանդակ բայը: Ի հայտ է գալիս «տեխնիկական պոեզիան»՝ բովանդակությունից զուրկ բանաստեղծություն-գլուխկոտրուկ, որն ընթերցելու համար մեծ հնարք, արաբերենի և պարսկերենի լավ իմացություն էր անհրաժեշտ: Երբեմն կիրառվում էր նաև «թարսի» ձևը, որտեղ բեյթերի բառերն ուղղահայաց էին հանգավորվում, կամ գրվում էին բանաստեղծություններ, որ միննույն տողը կարելի էր ընթերցել օսմաներեն, արաբերեն և պարսկերեն: Այս ժամանակաշրջանում են ստեղծվել նաև առաջին թեգերերեններն (Լաթիֆի, Աշըք Չելեբի, Հասան Չելեբի, Բեյանի, Ահդի) ու պատմագրության առաջին աշխատությունները (Լյուրֆի փաշա, Հոջա Սադեհիդդին, Գելիբոլուլու Ալի և Քեմալփաշազադե) ⁶¹⁴:

Եթե 15-րդ դարի երկրորդ կեսից «Ոսկե դարը» ավելի շատ զգացական նշանակություն է ունեցել, քան գիտական, ապա արդեն 16-րդ դարում այն նոր որակ է ձեռք բերում⁶¹⁵: Խնդրո ժամանակաշրջանում օսմանյան պոեզիայում սկսում են լայնորեն կիրառվել էպիկուրյան, անակրեոնյան ուղղությունները, որոնց հիմքում ընկած էին սիրո, գինու գովերգումը: Նման ստեղծագործությունները լի էին սուֆիական կրոնական սահմանափակումների դեմ հեզնանքով: Պոետ-քնարերգուն շարունակելով ժողովրդական երգերի ավանդությունը, սկսում է խոսել առաջին դեմքով, իր տանջանքներն, ապրումներն

⁶¹⁰ Смирнов В., Кучибей Гомюрджинский и другие писатели XVII века, О причинах упадка Турци, С.-Петербург, 1873, стр. 1-2.

⁶¹¹ Боролина И., Никитина В., Паевская Е., Позднева Л., О некоторых общих проблемах возрождения в литературах Востока, Теоретические проблемы восточных литератур, Сборник статей, Москва, 1969, стр. 391-392.

⁶¹² Моллов Р., О некоторых ренессансных тенденциях в турецкой литературе, Теоретические проблемы восточных литератур, Сборник статей, Москва, 1969, стр. 104.

⁶¹³ Նույն տեղում, էջ 107:

⁶¹⁴ Pala İ., a.g.e., s. 122-123.

⁶¹⁵ Маштакова Е., Из истории сатиры и юмора в турецкой литературе (XIV- XVII веках), Москва, 1972, стр. 83-84.

ուղղակի կամ այլաբանորեն ուղղորդելով սիրեցյալին: Նա արդեն նկարագրում է երկրային մարդու զգացմունքները, անդրադառնում բնությանը: Քնարարական պոեզիան բացահայտում է մարդու ներաշխարհը և գրականությունը դիմում է կոնկրետ կենդանի մարդուն, որը դառնում է, գլխավոր երևակայության առարկան և փորձում է հաղթահարել մինչ այդ կաղապարված սահմանափակ գրական դաշտը⁶¹⁶:

16-րդ դարում ավարտվում է պարսկական պոեզիայի՝ երեք դար տևած նմանակման ժամանակաշրջանը, և ինչպես գրում են խորհրդային գրականագետներ Լ. Ալկանան և Ա. Բաբանը, «առաջին անգամ օսմանյան բանաստեղծների ստեղծագործություններում՝ գազելներում, քասիդներում, նկարագրում և գովերգում են Ստամբուլը, թուրքական քաղաքի լեզուն՝ Ստամբուլի բարբառը, ... ստեղծվում են կոնկրետ իրադարձություններին վերաբերող գազելներ»⁶¹⁷:

Այսպիսով, ուսումնասիրելով 16-րդ դարի օսմանյան պոեզիան ու վեր հանելով դրա առանձնահատկությունները, պետք է նշել, որ այս շրջանի գրականությունն իր զարգացման գագաթնակետին էր, ինչը պայմանավորված էր կայսրության քաղաքական, սոցիալ-տնտեսական իրավիճակով: Քաղաքական իրադրությունը, քաղաքների աճը և հատկապես սուլթանների՝ բանաստեղծներին հովանավորելը մեծապես նպաստում էին գրականության զարգացմանը: Դրա հետ մեկտեղ դեռևս պահպանվում էր պարսկական գրականության գերակա ազդեցությունը, թեպետ այս շրջանում որոշ օսմանյան բանաստեղծներ սկսում են իրենց ստեղծագործություններում ներառել թուրքական ժողովրդախոսակցական արտահայտություններ, դարձվածներ՝ փորձելով վերացնել պալատի և հասարակության միջև առաջացած անջրպետը:

О НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЯХ ОСМАНСКОЙ ПОЭЗИИ XVI ВЕКА

Ани Саргсян

(резюме)

В статье рассмотрены отличающиеся друг от друга взгляды известных западных, русских и турецких востоковедов-литературоведов на историю Османской Империи 16-ого века, названного “Золотым веком”. В 16-ом веке в результате ряда политических и социально-экономических изменений Османская литература была на пике своего развития. Тем не менее, персидская поэзия продолжала сохранять приоритеты над османской поэзией.

⁶¹⁶ Боролина И. и др., там же, стр. 391-392.

⁶¹⁷ Алькаева Л., Бабаев А., Турецкая литература. Краткий очерк, Москва, 1967, стр. 30.